



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5835(2f)

23502 -

23504 (3f)


5211 (7f)

8073-8075
(9f)

929

5-96

5211



ԵՐՈՒԱՆԻ ՏԷՄԻՐԱԵԱՆ

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ ՀԱՅՈՑ ԳԱՀԻՐԷԻ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՆ ԴԵՐԸ



ԲԱՆԱԹՈՒԹԻՒՅՆ Բ. ԼՍԱՐԱՆԻ

(25 Դեկտեմբեր 1899.)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒՅՆ Ա.



ՏՊԱՐԱՆ Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ


1900



Սեպհականու քիրն ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ ԸՆԿԵՐՈՒՄԵԱՆ

7

13559



486 P
40 P

Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Լսարան-Ղնրեցասուն Բնկերութեանս Գործ. ժողովը կը փութայ հրատարակութեան սալ սոյն հիւրեղ ու շղոս բանախօսութիւնը գոր ըբաւ մեր համակրելի նկարիչներէն Մեծ. Տիար Երուանդ Տեմիրճեան, Ապու-Խալիլ րասրոնին մեջ, ուր տեղի ունեցաւ Բնկերութեանս Բ. լսարանը :

Կը յուսանք թէ՛ սոյն հրատարակութիւն՝ Հայ ընթերցատէր հասարակութեան կողմէն պիտի զտնէ բազմացուած ընդունելութիւնը, եւ այսպէս, մի կողմէն՝ ընկերութիւնս իրաւունք պիտի ունենայ հպարտանալու՝ իւրայնոց մտաւորական մակարդակին բարձրացումը պատրաստող այսպիսի օգտակար բանախօսութեան մը հրատարակութեամբ, միւս կողմէն ալ հայութեան ընթերցատէր մասին նաշակը պիտի ազնուանայ եւ հմտութեան պաշարը պիտի աւելնայ :

Ուստի մեր ընթերցատէր, մտնաւանդ արտասանմանի հայութեան կը մնայ Բաշակրել Բնկերութիւնս՝ իր այս նախածեռնարկին մեջ, փութով սպասելով սոյն անդրանիկ հրատարակութիւնը, որպէսզի յառաջիկային ՚ի լոյս ընծայել տան յաշորդարար, ազգային, գրական, գիտական ու Բազմական ուրիշ շահեկան հրատարակութիւններ ալ, որոնց մէկ մասն արդէն մասնով տակ է -

Նկարիչ բանախօսը՝ լսելի ընելով իր ձայնը մեր լսարանին մեջ, հրանանգիչ տպաւորութիւն մը թողուց ունկնդիր հասարակութեան վրայ. իսկ ընկերութիւնս՝ բանախօսին սոյն ծառայութեան փոխարէն՝ կը կանգնէ իրեն այս փոքրիկ արձանը, ՚ի նշան հիպացման եւ համակրանաց :

Ի դիմաց Գործ. ժողովոյ Լսարան-Ղնրեցասան

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Հ. Ա.ՉԱՏԵԱՆ Ս. ԲԻԲԻՐԱՏ

206

ԱՌ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆ

Ե. ՏԷՄԻՐՃԵԱՆ

Երբ մարդս ինկզիմ թզգաց էակ միսածոյ.

Բայկի մէջ Գեղարուեստին գերծաւ փոյ.

Որ ձայնք, երանգ, ցոյք, Բրնուրեան մութ գաղտնիք,

Ասուածային առին ձեւեր ու կրնիք.

Նկարիչներ, Երամիտներ, Քերթողներ,

Գոյք անմահ էք, ձեռնայն թզնկ կերեց Տեր ... :

Գանիբէ, 1 | 3 | 1900

Ս. ԲԻՆՈՒՍ



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՆ ԴԵՐԸ

Կեանքի ուղղութիւնս էր մտիկ ընել, փոխանակ մտիկ ընել աալու. իսկ այսօր ստիպուած եմ, գրեթէ բռնի, մտադրութեանս հակառակը շարժելու: Զգալով բանախօսելու ապրիկարութիւնս, պիտի կարգամ ձեզ գրութիւնս, ուր պիտի տեսնէք իմ անզօր ճիղերս, ապարդիւն ջանքերս բասեր զբանելու, որք կը խուսափին իմ ոչ-բանաստեղծ ուղեղէս, ու հարկադրեալ՝ նսեմ բասերով ստիպուած եմ փորձն ընել պարզելու մի քիչ գեղարուեստը. գեղարուեստը, որ ազն է մարդկային կեանքին, աստիճանաչափը ժողովուրդներու զարգացման, ջանք անդերքին, լոյս, կեանք տուող արեւը:

Ու մենք որ անտարբեր ենք գէպ ՚ի այն, կ'անպիտանանք անոր հրաշքները, եւ առ առաւելն իւր հաճոյ զբօսանք մը կը նկատենք զայն, ո՛րքան կը սխալինք եւ ո՛րքան կարմրելու ենք այդ վիթխարի սխալը դորձելով:

Սյն տես սի մը զանդուածը, որուն մարդ պիտի ըսենք յետոյ, նախ մտի կոյտ մը, գրեթէ անզգայ, որ հետզհետէ, զգալարար զարգանալով, յառաջ կը դիմէ, կը մեծնայ, այն ատեն պատսնի անունը կուտանք անոր՝ որ քիչ առաջ, սղայ կոչեր էինք, եւ որուն յետոյ անբաւական գանելով այդ անունը, պիտի ըսենք մարդ (Գիողինէսի փնտռածը):

Ճիշդ այդպէս ալ ազգ մը որ կազմուած է մարդէն, պարտի զարգանալ, յառաջանալ, մեծնալ, եթէ էջ ուղեր մեռնիլ, անհետանալ:

Կատարելութիւնը՝ գատողութիւն ունեցող էակներու նպատակն ըլլալով, մեր ճիգերէն պարտաւորուած է ծնելու գեղարուեստը՝ երջանիկ ընելու համար զմեզ:

Մարդ իւր մէջ կը կրէ սերմը՝ ազդելու եւ ազդուելու անունովն. մէկով՝ չըջապատածներուն

վրայ կը բանեցնէ իր ազգեցութիւնը, իր ոյժը, ինչ որ արգէն Աստուծոյ պատգամն է, իր երկրային տիրապետութիւնը. միւսով՝ ընդհանուր հասանքին կը յանձնէ ինքզինքը, ուր իր կեանքի զգացումներուն խորը կը սուզի, ուր կը վնասէ իր իրաւունքներուն ընդարձակութիւնը :

Այս սերմն իր մէջ արգասաւորողն է գեղարուեստը :

«Առանց արուեստագէտներու եւ գրագէտներու բարերար ներշնչումներուն, մարդկութիւնը սանոյցէ կազմուած պիտի ըլլար, կ'ըսէ Գերազրի, զի անս'նք են որ կը կազմեն ժողովրդին ճաշակը, կը բարձրացնեն միտքը, կը բորբոքեն զգացումը ու կ'ազնուացնեն տեսողութիւնը »:

Ազգ մը իր նախնական անմեղութեամբ՝ կրնայ երջանիկ օրեր անցընել, առանց գեղարուեստէն սպասելու իր երջանկութիւնը. ծերացա՞ւ, ա՛լ կ'իյնայ, եթէ չ'ունենայ զանի իւր մէջ. ա՛լ չ'ըսեր մատուցանել իր թագաւորին ափ մը խարով պսակազարգ երկայն ձող մը, ա՛լ պէ՛տք կ'ըլլայ ներկայացնել անոր արծիւ մը տարածուն թեւերով :

Գեղարուեստն է որ կը տաչէ ժողովուրդը, կը հանէ զնա բարբարոսութենէ. իրա՛ւ է որ անոր նախնական պարզ ձեւի մէկ մասը կը հալեցնէ, բայց զլսն չ'կրնար պահել իւր տղայութիւնը. հետեւաբար չ'կրնար պահել եւ անմեղութիւնը՝ տղայ մեծնալով. վասնզի պէտք է անպատճառ մեծնալ, եթէ չէ մեռած : Մարենք արուեստին լոյսերը, ի՞նչ պիտի մնայ. բարբարոսութիւնը՝ իր հին առաքինութիւններէն ալ մերկացած, մարդը՝ իր անտիական անմեղութիւնէն ալ զրկուած :

Արդ, եթէ գեղարուեստը չօչափելի օգուտ մ'ալ չ'ունենայ, մե՛ծ է անոր զօրութիւնը կեանքի ընդարձակութեան եւ անոր փոփոխութեանը մէջ. ու այսօր առանց անոր՝ չէ կարելի ենթադրել ընկերական մարդը :

Անցնինք հիմայ գեղարուեստի ծննդոցին:

Ֆիզիքական պէտքերը անհրաժեշտ ըլլալով մարդուն՝ իր առաջին ճիւղերը թափեր է առնոց: Նախնական մարդը բնակեր է ծառերու կամ ժայռերու խոռոչներուն մէջ: Երկրագործ էր մարդը. տեսնելով որ առատ էր հունձը եւ որ ըստ օրէ կ'աւելնար, ստիպուեցաւ շինել ամբարանոց մը, ինչ որ ծնունդ տուաւ ձաւարապետութեան:

Երջանիկ էր մարդը, պէտք կ'ըզար յայտնել իր երախտապիտութիւնը. որով, այն անտեսանելի գորութեան որ զինք կը պաշտպանէր, կը հոգար: Շինեց ուրիմն Տաճարը. ա՛յդ տաճարի պարագուծութեան մէջ կը թափատէր իր աճարեկ, խենդենալու մօտ միտքը. բան մը պէտք էր, չեմ գիտեր ի՛նչ, որուն վրայ կենար, յատէր իր մոլոր նայուածքը, ու գտաւ. քար մը, նոյն խակ շէնքին նիւթէն, ա՛րդ, իր մէջ գարգայում զգալով, չ՛բաւականացաւ ատչո: Զօրութեան կենդանի օրինակը կը տեսնէր իր մէջ, իր նմանին արտադրութեամբը, եւ որովհետեւ մարդուն արուած չէր կենդանութիւն տալ նիւթին ալ, բաւականացաւ աւելով քարին՝ մարդկային կերպարանքը, ու ծնաւ Արձանագործութիւնը:

Աւելի եւս յառաջանալով, անարժան գտաւ այդ անտաշ շէնքը ու շինեց տաճարը ողորկ պատերով, ձեղուններով, սիւններով, ու առնոց պզղ մերկութիւնը մէջտեղ ինկաւ. ուրիմն այդ պատերուն վրայ գծուեցան կրօնքին նշանակիչ ձեւերը, աստուածներու, զիւցազներու գործքերը նկարուեցան հաս, ինչ որ յաղթանակն էր արուեստին յաջողութեան, ու աճաւ Նկարչութիւնն էր ստեղծուած:

Հոս գիտողութիւն մը:

Մենք ուղած էինք գեղարուեստը բացատրել, եւ աճա մեր զիմաց ցցուեցաւ կրօնքը. արդեօք այս երկուքը գաղտնի կապե՞ր ունէին իրենց մէջ. մին կանչուած ժամանակ՝ միւսն ալ կը ցուցնէր

ինքզինքը. այո՛, եւ երբ խորը մտնենք, պիտի տեսնենք որ այդ կապերը ծնողական են. կրօնքն էր որ սնուցած, յառաջ բերած էր գեղարուեստը. կրօնքը մայր ու գայեակը եղած էր գեղարուեստին: Ծարունակենք :

Ծնած էր գեղարուեստը. զանազան միջնորդութի տակ զանազան դոյներ առած էր նա : Երբ հաճոյալի, սիրուն ձեւ մը առած էր Յունաստանի եւ Փոքր-Ասիոյ մէջ, խորհրդաւոր, մութ եղած էր Եգիպտոսի մէջ, այգպէս չէ՞ք գտներ Մեհեթիսի մեհեանները :

«Եգիպտացի ոյ մեհեաններու ճարտարապետութիւնը ահարկու է, կ'ըսէ Շառլ Պլան, բարձր ու թանձր պատեր հազիւ երբեմն իրե՛ց բարձրութիւններու վրայ բացուած նեղ ծակերով, ուրկէ ոչ ոքի աչքը կրնայ թափանցել ներսը, պատերուն մէջ դուռ մը փորուած՝ որ թերեւս ժամանակով անցք մը եղած ըլլար ու հիմայ յաւիտենական փակումի դատապարտուած, մէկ մուտք միայն ունի շէնքը, աստուածին եւ իր քրմերուն միայն յատուկ. այդ ճարտարապետութիւնը՝ այն լո՛ւռ, սոսկալի մտածումները կ'արտայայտէ, որք արգիլուած են հասարակութեանը. անոր պայմանն էր դազանի՛քը պերճախօսութեան: Եգիպտացեոց այդ մեհեաններու մէջ հանդիսական ծանր միտութիւնն էր որ կը տիրէր, որուն սեմէն Փարաւոն մ'անդամ երկայն արարողութիւններէ ու սրբացումներէ յետոյ կարող կ'ըլլար միայն անցնիլ »:

Ա՛րդ, ինչպէս ըսինք, գեղարուեստը կլիմային ազդեցութիւնը կը կրէ. ու երբ ասդին եգիպտական մեհեանի մը հասա պատերը, ահագին թանձր սիւներով, ծանր կը տիրեն մտքին, որպէս իրենց հաստատուած աւազին վրայ, անդին Յունականը կը բարձրանա՛յ, փոխանակ ճնշելու, կը բարձրանա՛յ գէպ երկինք, վեհարար թառած իր Յոնիական թեթեւ սիւներուն վրայ, ուր իբրու կոյսի մը

հրաշագեղ, կը վազեն, կը խոնին երկրպագու-
ներու ամբոխը :

Ի՞նչ տարբերութիւն եղիպտականին ու Յու-
նականին մէջ :

Չէ՞ք զգար մէկուն առ մուրն՝ երկիւղած
երկրպագութիւնը եւ միւսին առ լոյսն՝ բացօթեայ,
վարդագոյն պաշտումը :

Ու երբ անցնինք ճարտարապետութենէ — որ
կը կրէ կլիմային, ինչպէս նաեւ հասարակաց
հաւատքին ազդեցութիւնը — արձանագործութեան՝
որ միեւնոյն խմորն ունի, ու երբ թզթաանք
եղիպտականն ու յունականը, չպիտի՞ սքանչանանք
բռախիթէի աստուածուհւոյ մը թեւերուն վրայ,
որք ա՛լ փակած չեն մարմնին, եղիպտականին պէս՝
սրունքներուն, որք խորտակած են այն կապերը,
որով իրարու կցուած էին, գլխուն՝ որ շնորհալի
կերպով կը ծալէ ուսերուն վրայ, ու հոգ ազատ
ու երջանիկ կեանքին նշոյլները չ'պիտի՞ նշմարէք:
Ա՛րդ, ինչպէս որ կլիման կ'ազդէ գեղարուեստին,
այնպէս մե՛ծ է կրթութեան ազդեցութիւնը ժո-
ղովուրդներու նկարագրին վրայ :

Գեղարուեստին այս զարգացումը՝ տարբեր
աստիճան կ'ունենայ կրօնքներու զանազանու-
թեան մէջ. ինչպէ՞ս կուզէիք որ բայուէին եղիպ-
տական արձաններու թեւերը, սլանային օդին մէջ,
չէնքերու գմբէթները, ա՛յդ թմրեցնող կլիմային
տակ :

«Եղիպտոսի գրեթէ անփոփոխ ակրոզ տաքը,
ճնշող կլիման, սոսկումէ ստեղծող անապատներէ
չըջապատեալ դիրքը, կ'ըսէ նորէն Շառլ Պլան,
կը պաղեցնէ գաղափարը, անշարժութեան կը դա-
տապարտէ հաւատքը. միեւնոյն բարբը, միեւնոյն
սովորութիւնը կը ակրէ գարե՛ր ու գարե՛ր. հոգ,
մեծը կրնայ հարկազրեւ ժողովուրդը, անփոփոխ
կրօնքի մէջ քալելու, քանի որ ամեն իշխանու-
թիւն հանելուկներով է պարուրուած, խորհրդա-
նշաններու տակ է ծածկուած, որուն ո՛չ մօտենալ

եւ ո՛չ ալ հասկնալ կուտայ հասարակ անհատին :
 Կրօնք մը ունի երկու ձեւ, մեզմ եւ սպառնական.
 այս վերջի ձեւին տակ դարերս գլորեցան, բռնու-
 թիւնը ճնշեց գեղարուեստը, ճարտարապետը խո՛ր,
 մութ կամարներով շինեց տաճարք : Բռնութիւնը
 անյոյս, մերկ, երեսի վրայ ձգած էր մարդկու-
 թիւնը, չարչարանք ու պատիժ կար, մխիթարու-
 թիւն ընա՛ւ. մարդիկ ոմանք զլուանք ու գարշանք
 միայն տեսնելով երկրի վրայ՝ դարձուցին աչքերնին
 երկինք, ու աճա սկսաւ հոսիլ արիւնը, իրար
 խեղդեցին, իրար բլկեցին :

Սոսկումէ դարնուած՝ փախան արուեստները,
 ջարդ ու փշուր եղան արուեստի հրաշալիքները.
 ամեն բան փոշի դարձնելու այդ արիւնտ աչքերու
 կտրութեան տակ կ'զգային որ այդ գեղեցիկ ար-
 ձանները դադարի վտեմին, անհունին պատկա-
 ռանքը կուտային իրենց ու հոն պղծութիւն եւ
 իրականութիւն միայն տեսնելով՝ հարուածեցին :
 Ա՛յդ սեւ օրերու միջոցը, որ մարդկային ազգին
 արիւնտ տառերը մնացեր են, այդ երկա՛ջն, մութ
 դիշխուան վերջերը տեսնուեցաւ արշալոյսը, որ
 մեղմանոյ լոյսով մը կը փայլէր. Աւետարանն էր
 այդ, որ կանչեց իր բոլորաբը դիտութեան,
 ահաբեկ արուեստներու բեկորները, շոյեց, ներշն-
 չելով անոնց նո՛ր կեանք : Ու երեւան եկան Միքէլ-
 Անճեփոնները, որոյ հովիտ ձեռքին տակ մարմարը
 հողի կ'աննէր, ու կը հաստատուէր եկեղեցիներու
 մէջ. երեւցաւ Ռաֆայել, աստուածայինն Ռաֆայէլ,
 որ իր մեղմանոյ վրձինով եկաւ հանդարտել միտ-
 քերը, յարգանք ու սէր խնդրել Երկնքին համար.
 ու աճա գեղեցկութիւնը կ'երթար բազմիլ սուրբ
 վայրերու ներքը, ուր խաղաղիկ բոլորուեցան սե-
 դաններու շուրջը, կոյսի մը եւ Մ'անու կի մը դծերուն
 տակ. մանուկի մը՝ որ աշխարհի ճակատագիրը,
 տիեզերքի դունդն ունէր իր ձեռքին մէջ. տեսնու-
 ւեցաւ Քոռեմիօն, երկինքէն հրաւիրեալ, իր քաղցր

ու սիրուն շրջագիծերը կտաւներու վրայ անցը-
նելու, ի սքանչացումն ժողովուրդներու :

«Յթէ, կ'ըսէ Գերադրի, Աստուածամայր իր
սեռին թիթեւ յանցանքներէն զերժ հզամ չէր,
եթէ զեռ պահած էր, իր անդիլի կեանքին մէջ,
այստեղի շնորհներէն, եթէ վերջապէս, կնութենէ
զեռ իրեն բա՛ն մը մնացած էր, յերաւի, պիտի
շնորհաւորէր ինքզինքը, պիտի հրձուէր, իր ան-
բացատրելի շնորհներուն նկարողները (Ռաֆայէլն
ու Քոնէճիօն) ունեցած ըլլալուն համար, քանի որ
չէ հրամայուած հրեշտակներու վրձին բռնել :»

Ահա այս սիրուն, բարձր, ազնիւ արուեստն
է որ կուզէի մեր մէջ ունենալ ամբողջութեամբը,
որ մեր ամեն մէկուն զոնէ կէսը կազմէր, ինչ
զիրքի եւ աստիճանի մէջ ալ հզամ ըլլայինք :

Չէ՞ մի որ ամեն բան անով կազմուած է,
նոյն իսկ օրիգներքը, աշխարհները, չորս կողմից
միշտ զեղարուեստը չէ՞ որ կը սեսնես ծնած
վայրկեանէն սկսեալ, ծառերը, լեռները, ծաղիկները,
երկինքը, ծովը, երկիրը, եւ այս ամենուն մէջ,
անհուն ներզաշնակութիւնը, ոսկի գունտերուն
թաւալումներէն մինչեւ միջատներու բզզիւնը. չէ՞
որ այդ ամենը՝ իր զանազան ձևն ու գոյնը, այ-
լազան արտայայտութիւններն ունին : Գո՛ւ ինքզ
բուն զեղարուեստը չե՞ս արդէն. ի՛նչ հրաշալիք,
Մարդը, Աստուած իմ, ի՛նչ մեղմ գոյն, ի՛նչ վեհ
նհրդաշնակութիւն զծերու, գոյներու. ի՛նչ սքան-
չելի ամբողջութիւն :

Այո՛, պէ՛տք է որ զարդանայ զեղարուեստը
մեր մէջ, այդ անհուն կերպիւ բարձր, ազնիւ,
օգտակար երբորդութիւնը, որ աշխարհներ կը դրդէ-
մատ կ'ունենայ, բուն իսկ պատճառը կ'ըլլայ
զինք ժառանգած, զինք սիրած ազգը պաշտպա-
նել տալու գործին մէջ :

Այս վերջի թրքօ-յունական պատերազմին
ժամանակ՝ ամեն լուսաւորեալ երկիր ներքին
տաղնապներ, ներքին խոտլութիւններ ունեցաւ,

ի՞նչ էր այդ ժողովուրդի կամքն էր, ընդդէմ տէրութեան. ժողովուրդը՝ առաջնորդեալ գիտունէն, արուեստագէտէն, որուն միացած էր անթիւ բազմութիւնն ուսանողաց, այն եռանդուն ուսանողաց, որք շլացեր, յափշտակուեր էին Յունաստանի բանաստեղծութեան, գեղարուեստի պատմութեամբը. որոց զիւցաղո՞նները վառեր էին իրենց եռանդը. գեղարուեստը՝ որ գեռ հոր ճաշակեր էին, հոն նշմարելով դարերու հանելուկները, ազգերու բարձրութիւնն ու ազնուութիւնը, օղբ կը թնդայնէին, օգնութիւն գոռալով. օգնութիւն այդ երբեմնի աշխարհը բարձր դիրքն ունեցող ազգին, գեղարուեստի ջահն երկինքներու գպցնող սերունդին. եւ արդէն այդ ազգի այժմու գոհացուցիչ վիճակը՝ իրենց նախնի բարձր դիրքին վարձատրութիւնը չէ՞. անոր չե՞ն պարտիր այս ազատ կեանքերնին:

Ուստի, հաւատանք որ եթէ Բարդեսնը, Վեցիւսը սը Միլօն, Աբօլոն սը Պելլէսքը, եւ ուրիշներ եւ ասոնց հետ թղթի կտորներ, Իլիականն ու Ոդիսականը, այդ հսկայ, անհամեմատ կերպով վեհ, բարձր, խի՛ստ բարձր, աստուածային կտորները ժառանգած չ'ըլլային՝ մզոններով ետ պիտի գտնուէինք այսօր. եւ անոր ալ՝ Յունաստանին՝ չ'պիտի տայինք այն յարգը, պատիւը, պաշտումը ինչ որ այսօր պարտաւոր ենք շոայելու իրեն, եւ ա՛յդ իսկ պատճառաւ սիրել իրենները եւ ամեն ճիշտ թախել, անոր բեկորները պահպանելու համար:

Ես որ այս տողերը կ'անցնիմ, սրտիս շատ խորերէն կ'զգգամ որ ստիպեալ եմ յարգելու, ակնածաբար, բարբախուն խոնարհելու այդ պատուական նշխարներու առջեւ. եւ ի՞նչպէս չ'խոնարհէի, երբ կը տեսնեմ զողգոջուն, որ ատոնք, այդ փշրտուքները՝ դարերու՝ պատմութիւնը կ'ընեն ինձ. ազնիւին, վեհին, ամենէն բարձր թողչովը կը քարոզեն, ամբողջ անձս կը զզրդեն ու կը սրբայնեն զիս :

Իրիկուն մը վերջալու սոյն, տեսեր եմ Բարդեմոնը, այն յունական Սփինքսը, ու դեռ հիմայ, դիմացս, ճակտիս վերեւը, շատ վեր ունի՞մ անոր պատկերը ու կը սարսռամ, կ'զգամ որ պէտք է խոնարհիլ, աւելի՛ բարձրացնելու համար, երկինքին վրայ տեսնելու համար զնա ու . . . կ'երկրպագեմ:

Արդ, դեղարուեստը կ'ազնուացնէ եսը, ու երբ անգամ մը տարածուեցաւ այդ մաքուր, վսեմ գաղափարը իմ եւ քու մէջ, բնականաբար ցած, դժուր բա՛հրէ պիտի հեռանանք, հետեւորար չպիտի ունենանք յաճախ, մշտնջենական կռիւններու, մարդասպանութիւններու վայրագ տեսարանները ու պիտի բարձրանայ ազգը իր ամեն խաւերով:

Ես պիտի համարձակիմ հետեւցնել, որ եթէ մեր հին Հայաստանը, շատ աւելի զարգացած ըլլար, ուր հիմայ պարտաւորէին վաղել մեծնալու եռանդ ունեցող օտարներ հո՛ն ուսանելու, հո՛ն ներշնչուելու, մեր հողին երկրպագելու համար, այժմ մենք շատոնց ճանչցուած, շատոնց պաշտպանուած պիտի ըլլայինք. իրենց ճիտ պարտքը պիտի ըլլար պատնէշ կանգնիլ անոր. մինչդեռ ցաւալի է ըսել որ քիչ տարիներ առաջ դժուարին չէր գտնել հարիւր հազարաւորներ որք մինչեւ իսկ հայ անուան գոյութեան կասկածէին:

Ա՛րդ, դառնալով դեղարուեստի բացատրութեան, ինչպէս վերեւ ըսինք, Երրորդութիւն մ'է, իր հրեշտակներով շրջապատեալ: Ես պիտի գասաւորեմ հետեւեալ կերպով, առանց ի նկատի առնելու անդրանկութիւնը:

Բանաստեղծութիւն, Նկարչութիւն, Երաժշտութիւն:

Արձանագործութիւնը նկարչութեան շօշափելի եղանակն է. ճարտարապետութիւնը միացումն է այդ երկուքին, անմիջական օգուտներով օժտուած. կը մնայ Թատրոնը, որ այդ ամենուն բացատրութիւնն է՝ մարդուն անմիջական մասնակցութեամբ.

զերառաննները խելացի թարգմանիչներ են ժողովուրդին պարզելու համար զեղարուեստի այդ ամեն ճիւղերը : Ահա՛ անունը մարդուն, որ կը պակսի միւս կենդանիներուն :

Չատենք բարոյական կենդանին՝ Ֆիլիքսականն, այս վերջինը մէկ հոգ միայն ունի, Ֆիլիքսականը. բարոյական կենդանին՝ մարդը, շատ պզտիկ ժամանակ մը վասնելով Ֆիլիքսականին, ամբողջ կեանքը բարոյական անունդին է յատկացուցած. մէկ խօսքով, կենդանին կ'ապրի՝ ուսելու համար, իսկ մարդը կ'ուտէ ապրելու համար :

Մարդ խորհելով է որ կը զարգանայ եւ արդէն այդ կարողութեամբն է որ կը բարձրանայ միւս կենդանիներէն. խորհիլը անձայն կը կատարուի, ամեն վսեմ բաներու պէս. խորհողը ոչինչ կը տեսնէ աչքին առջև, մինչդեռ ամբողջ աշխարհներ կրնայ տեսնել այդ խորհրդածելու կարողութեամբը. ի՞նչ զարմանալի կարողութիւն Աստուած իմ, այդ գաճաճ մարդը ս'ըբան բարձրերէն, որքա՛ն խոր անգունդներէն կրնայ սահիլ. ի՞նչ հրաշք. ս'վ է այդ հրաշքը գործողը, Գեղարուեստը : Պիտի պտտա՛մ՝ զեղարուեստը :

Այսպէս, երբ Տանգէի Դժոխէք կը կարգամ, սոսկումէս կը սասիմ, ինքզինքս, տառապողներու, չարհարուողներու մօտը տեսնելով, անոնց ազելխարշ պոստուքները, լացն ու կոծը կը խլացնեն ականջներս. ու դեռ հիմայ կ'զգամ ականջներուս զանչելը ու հոն կը փոխադրուիմ : Երբ մենք գանուինք Ռաֆայէլի նկարած կոյսի մը առաջը, կոյս որ Ռաֆայէլի սրտէն միայն թռած է ու երբ նայինք լուս ու սքանչանօք կոյսին վսեմ կերպարանքին, շնորհայի գէժքին որ արդէն լուսթիւն ու խոնարհութիւն կը հրամայէ, անոր վճիտ, պայծաւ ճակատին վրայ որուն տակ անոյշ մտածումներ կը սահին, չ'պիտի՞ կերպարանափոխուինք. այն ժպիտը որ երկրիս ուրախութիւններուն կը պատկանի, այն նայուածքը՝ որ երկնքինն է եւ

ասպագային, չ'պիտի՞ զանել տան մեզ միացումը երկինքի ու երկրիս զեղեցկութիւններուն. այսպիսի անարատ զէմք մը զիտելէ վերջ, միթէ ազնուութիւնը, երկնային պայծառութիւնը չէ՞ որ պիտի համակէ մեր ամբողջ անձը:

Երբ որ այցելել ուզենք Սիքսթինի մատուռը, պիտի քամուինք, պագած, այն հսկայ պատկերին առջեւ ուր պիտի տեսնենք հսկաներ, զալարուած, պրկուած անդամներ՝ պացող, կծկտած. աչքեր՝ արիւնտա, պիտի գոցենք ականջնիս, այն դոռում գոչումը չ'լսելու համար. մատուռին խաղաղ լուսթեան հակապատկեր, ու երբ գուրս նետուինք, ազատ, լիաթոք պիտի շնչենք, կարծես ռարապիկի երազէ մը քրանած. ու անկէ ի վեր միշտ սրտերնիս պիտի տրտիէ երբ մեզ խօսին Միքէլ Անճելօի ու անոր արիւնէն պոսթկացած այդ լիթիւարի Վերջին Դասասանին զրայ :

Ու երբ յետոյ Ֆրա Անճելիօի Կոյսի Պսակ այն թարմ, գոզարիկ ու զովարար նկարին առաջը տարուինք, երբ անոր ազիքներէն սահած այդ թեթեւ, երկնային կոյսերու երամին մէջ փոխազրուինք, շունչ չ'պիտի՞ առնունք անոնց գոյութիւնը չ'արատելու համար. պիտի հմայեն զմեզ այդ կոյսերը, որոց ճերմակութիւնը՝ անպատճառ չոչաններէ էր քաղուած, վարզագոյնը՝ արշալոյսէն, կապոյտը՝ երկինքէն ու սակին աստղերէն, շատ զիւրութեամբ պիտի զգանք որ անոնք երկինքի բնակիչներն են: Երբ Միքէլ Անճելօ տեսաւ այդ պատկերը, գոչեց «Անպատճառ այդ մարդը՝ արքայութիւնը տեսած է »:

Ու ստի կը հեռուցնէք որ այդ անրիժ պատկերը հետու պիտի վանէ Վերջին Դասասանի տպաւորութիւնը. այո՛, լայց հաւատանք, որ գուրս չ'պիտի մզէ, այլ պիտի հաստատէ զնա մեր մտքին մէկ անկիւնը, լայն բնակարանի մը մէջ : Ու մենք պիտի տեսնենք լոյսեր, յոյսեր, անոյշ կապոյտ երկինքներու, թեթեւ վարզագոյն ամպերու մէջէն

ու համակ անձերնիս պիտի նրբանայ, պիտի սրբանայ, ու երբ դուրս ելլենք՝ աչքերնիս երկիրք պիտի յառին, ուր պիտի տեսնենք շուշան դէմքեր, որ կը ժպտին :

Աճճեկիֆօ կրօնաւոր էր, իրիկուն մը իւր ընկերները տեսնելով որ չէր երեւնար Աճճեկիֆօ, անոր խցիկին դուռը ձեռք առին, բայց զարմանքով տեսնելով որ ներսէն ձայն մը չէր գար, խորտակեցին դուռը եւ ապշեցան տեսնելով զնա, մարած իր դեռ նոր նկարած խաչելութեան պատկերին ոտքը փռուած :

Անցնինք հիմայ դէմքերու առաջ որք Լեօնարսօ սու վիճչիցի սրտի երակներէն են հոսած. կա՛ց, կ'զգամ որ այն նայուածքները որք ՚ի սկզբան այնքան պարզ կը կարծուին՝ կը կենդանանան, վեր ՚ի վայր կը յուզեն, կը ծակծկեն մարմինս, ու կ'արդիւնն զիս բերանս բանալ ու բառ մ'արտասանել. ու եթէ կը հաճիք, պիտի թողումբանաստեղծքնադատ մը, դէմ զիմաց, աստուածային վինչիի մէկ անմահ նկարին, ձիօֆօլիսայի հետ :

«Ձիօֆօլիսա, սփի'նքս գեղեցկութեան, որ խորհրդաւոր ժպիտ մ'ունիս եւ կարծես զարերու սքանչացումին կ'առաջարկես հանելուկ մը, որ դեռ անլուծելի մնացած է, անզիմադրելի է զօրութիւնդ, որով կը քաշես զիս առ քեզ : Ո՞ր մտլուրակէն ինկար, տարօրինա՛կ դու էակ, այդ նայուածքովդ որ անծանօթ հեշտանք կը խոստանայ, աստուածային կերպով ծաղրածու արտայայտութեամբդ : Կը խռովես դու զիս, խոր աչքերուդ մեղմ շուքին տակ կը նշմարեմ զազանիքներ, անհաւատներու արդիւնալ. ու ծաղրող շրթունքներուդ կծկումները աստուածներու միայն կը յարմարին, որք ամեն բան զիտեն եւ որք կ'արհամարհեն մեղմիւ՝ մարդկային ռամկութիւնը. ի՛նչ խռովիչ պաղութիւն նայուածքի եւ ի՛նչ գերմարդկային չարութիւն այդ մութ բիբերուդ մէջ : Աստուած իմ, միշտ հոն է, հոն, հեղնոտ հեշտու-

թեամբ ժպտելով, իր անթիւ, անհամար տարիաւորներուն :»

Երբ Կօրիէի այս տողերը կը կրկնեմ հոս, գիտցէք որ չափազանցած չեմ ըլլար այն անմահ վինչիի վրձինը. որ աստուածային անուշութեան ու երկնային նրբութեան մէջ թաթխուած է :

Հիմայ, մնա՞ց օտար արիւն Իտալիոյ ու Հայուն մէջ, չ'պի՞տի գուրգուրանք հիմայ Իտալիոյ համար :

Ես ոչինչ կը ճանչնամ Հոլանտայէն, սակայն Ռեյնլանդ մը բաւ եղած է սիրել ու յարգել տալու զանի, ինչ որ եղած է Մուրիլլօ մը, Ռիպիոս մը, Կոյա մը Սպանիոյ. Հօլպայն, եւ Տիւրեք մը Գերմանիոյ եւայլն :

Գեղարուեստի մէկ ճիւղին. նկարչութեան վրայ միայն խօսեցայ, սակայն կարելի է այդ իր միւսնոյն բառերով անցնիլ գեղարուեստի միւս ճիւղերուն վրայ եւ ահա կը տեսնեմ անցնիլը կարգաւ, լուս, անոնց՝ որոնցմով բնութիւնը հրճուանքէն կը խայտայ զանոնք իր արզանդին մէջ կրած ըլլալուն համար. զանոնք որք աստուածներու պատկառանք կը սահին, գեանէն թիզեր բարձր, շացած, պնդած աչքերուս առջեւէն, ու կը խոնարհիմ բնազդաբար, ձեռքերս խաչածեւած : Ու ահա Հոմերոս, Վիրգիլիոս, Շէքսպիր, — Ջեւքսիս, Ապէլ, Բոաքսիտէլ, — Անձէլօ, Ռաֆայէլ, Այվազովսքի, — Սոկրատ, Պլատոն, Արիստոտէլ, — Պիթօլըն, Օֆընպախ, Վալինէր, — Հիւկօ, Լամարտին, Մոլիէր, — Միլթըն, Պայրըն, Բազրատունի, — Կլուք, Հայէվի, Մէյէրպէր, — Ռէյմպոանդ, Վաստայք, Շիլլէր, — Կէօթէ, Քօթէճիօ, Դուրեան, — Ոսիան, Միձքիէվիչ, Ալիշան. — Միւսէ, Միլվուա, Պէշլքթթաշլեան :

Ա՛լ չեմ տեսներ, չեմ լսեր, լիզուս բերնիս մէջ կը չորնայ ու կը վերջացնեմ ընթերցումս :

Ե. ՏԷՄԻՐՃԵԱՆ



